

մատաղի սեղանին ալ նոյնը կը պաշտուէր:

Գ. Բայց բուն տեղն է յիշելու «Աւրհնութիւն հատի պատարագի», ծանօթ Անձեւացւոյն (Հյպտ. 290), զոր վերոյիշեալ հին Մաշտոցն յառաջ կը բերէ այդ վերնագրով. եւ զոր մեր մատենադարանի ուրիշ օրինակ մը, գրուած ի Սիս 1345ին, կը կարդայ՝ «Աւրհնութիւն հատի մարտիրոսաց», համաձայն այն օրերու յիշատակին՝ յորս կը մատուցուէր այս նուէրը (աստ, 316-7): Օրհնութիւնս միակ աղօթք մ'է համառօտ, որ կը պաշտուի կերակրոյ սեղանին առջեւ իսկ, որոյ վրայ եփուած ու դրուած է հատը, ինչպէս կ'ականարկուի աղօթքին մէջ՝ որ ըստ կարեւոր մասին հետեւեալն է, ԺԱ դարու Մաշտոցին համեմատ. «Աւրհնեալ ես Տր. Ած. արարիչ ամենայն արարածոց... առաքեայ զշնորհս հոգոյդ սրբոյ ի վերայ սեղանոյս այսօրիկ՝ որ առաջի եղեալս կա(յ), եւ աւրհնեա զհատս զայս եւ զգինիս, զի որք կերիցեն եւ արբցեն ի սմանե, եղիցի նոցա ի սրբութիւն եւ ի քաւութիւն մեղաց, ի կենդանութիւն եւ ի փրկութիւն անձանց, բարեխաւսութեամբ ամենայն սրբոց վկայից քոց, եւ արժանաւորեայ» եւ այլն: